

ՊԱՏՄԱԿԱՆ

ՀՅՈՒՍԽՕՍԿԵՐԻ ՏԵՂԸՆԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԸՆԳՐԸ.

(Հ-ր-մ-ի-ն-ն-ն, Ա-բ-բ-ո-ւ- և Ա-)

ՅՈՒԹԻՒՄ Յ.

ԿՐԱՏՈՒՆ.

Առնթեր Համազասպայ յարեելո կոյս կաթուղիկէ եկեղեցւոյ է քերուրանդակ զրասունի առանց ուանց շինեալ ի Յովհաննէո տրքեսլիսկոպոսէ Դօվեանց Խաչենեցւոյ ըստ վկայութեան արձանագրի՝ որ ի վերայ Ամենավրկից սնուանեալ իւաշին. որ զրի.

Անորհտոք սուրբ Երրորդութեան և ողբրմութեամբ սուրբ Նշանիս ես տէր Յովհաննէո նուսաս ծառայս ծառայիցն Աստուծոյ շինեցի զգաւիթո զգրատոնս և զրտչն նորին . . . Կամոք գեղեցիկ մատենսդարսնիո լիդ ու մոյն ճարտարօքէն քաղիլով բարձրացեալ են մինչեւ ցգլուխն Համակ նկարէն քանդակործութեամբ: Գրտունն բաժնեալ է յինն կարգս և ունի զրոլով պատուհանս ի պէտք դասակարգութեան մատենից:

Քաջայոյտ երեխի թէ ի հին ժամանակո ժողովեալ և սկսհանեալ կոյին ի սմին զրատան բազում մատեսնք պատմաբանականք և եկեղեցակոնք, ըստ որում ի բազում արձանս նորա նշանակեալ են թէ ով և զքանի մատեանս լինծայեաց ոյնմ զրատանսկային ի յետին դառն ժամանակս յահէ թշնամեաց՝ հանեալ աստի և թագուցեալ են ի յայրս և ի ծերպու վիմաց. ուր փտեալ գնդեալ անյայտ եղեն. այսակսի կորսուեան յայտնի ապացոյցք ին զիպուածոյ գիւտք ինչ ինչ մատենից, զի որովէս ի ՌՄՖ. (1761) սմին ի պարեխս վիմին Արծառանց ի Անահին, նոյնպէս և ի ՌՄԽԹ. (1800) ի Հաղբատ գտեալ եղեն ի տաւարածից բազում մեծապիր մատեանք, ի պարեխս վիմին Զարեհ (Զառնի) ոյրի, զորս ցեալ են տաւարածքն ուրումն անցորդ անանուն կարդացողի, որ ոչ կարացեալ ընթեռնու զհին երկաթապիրս, տացեալ է գոլ Յունարէն. ուստի և նոքտ անընտրով խոհականութեամբ հրոյ ճարտակեալ են զայնոսիկ մատեանս, լոց ի միոյ զանձարանէ զրե-

ցելոյի 2 (1451) թուին նօտր գրով ի վերայ մաքաղաթի և ի միոյ կիսամեռ Յայսմաւուրքէ. զի անգէտ կարդացողն զայն և եթ ծանուցեալ է լինիլ Հայերէն։ Այս գործ նոցա, ըստ ուսմկական կարծեաց բազմաց, է նշան մեծի յարգանաց առ սրբազան մատեանս։

Նմանապէս սկատմեն՝ թէ յաւուրս առաջնորդութեան Արքահոմ վարդապետի, գուցէ Եսլիսկոպոսի Թէքիրդաղցւոյ (1780) աշտկերտ նորա Պետրոս անուն ի ծերունեաց տեղւոյս իրազեկ լիալ պահարանի այրին, և ի Տփիսիսայ հնարագէտ հիւսանս ածեալ պէսպէս մեքենայաւոր գործեօք ելին ի դժուարամատոյց սկորեին վիմին, և բացեալ զզուոն այրին գտին ի նմա բազմութիւն երկաթագիր մատենից բայց առհասարակ եղծեալ և խանգարեալ, մինչ յայնչափ բազմութենէ մատենից միմիայն գտին անարատ զերգերգոց մեկնութիւն Պրիգորի Նիւսացւոյն գրեալ ի Տարօն ի թուականիս Հայոց Ն. (951) զկարմիր կոչեցեալ աւետարանն ականտկապ. և զմեկնութիւն Յովհաննու աւետարանին։ Ծերունազարդ Զոքարիա վարդապետն սկատմեաց, թէ բազում ամօք յառաջ կային ի զզեստատան խորանի մեծի եկեղեցւոյն բազում գրչագիր մատեանք, զրեալ հին գրով, զորս ապա խռովութեան աղազաւ վոխաղրեցին ի Տփիսիս յառաջնորդարանն Հաղբատայ վանից ի բերդի կաթուղիկէ եկեղեցին, և ասոի յաւուրս պէս պէս սկատերազմաց անկան ի ձեռս այլոց իսպառ ի յաւիտենական կորուսու Այսօրինակ դիմուածովք թափուր եղեալ է հին ամենատեսակ մատենիք հարուստ գրատուն Հաղբատայ։

Պ. Աղէքոանդր Երիցեանց Սանահնեցի ի 1873 ամի հետաքրքրութեամբ և մեծաջան աշխատութեամբ ի ձեռն քարագնաց Երիտասարդաց եհան ի ծակ քարայրէն Զառնի բազում հնաձեռագիր մատեանս, զորս եցոյց ինձ ի 1875 ամի, բայց ափսոս, զի ի հնութենէ ժամանակին գճգճեալ, և ի խոնաւութենէ անձընածեծ և կրաշազախ տեղւոյն աղիւսանման քարացեալ էին անգին մատեանին և մնացին մեզ իսպառ անվերծանելիք։

Արձանագիր ի վերայ սեմոց դրան գրատան։

* Թուին Ոիլ (1179) յանուն Սստուծոյ ես Արամս, որդի Համազասպայ՝ յիշեցի զբաղում յանցանս իմ և եղի զյոյս իմ իսուրը նշանս, և եկի կրօնաւորեցայ աստ, և ետու զիմ հայրենիք այգին՝ որ առաջի Էկլաձորոյ ի գրատունո Հաղբատայ յի-

շատակ հոգւոյ իմոյ. և ետուն ինձ երկու ժամարար ի տանի
սրբոյն Անտառիւ Արդ որ զիմ այգին յայսմ տանէս հանել ջանայ,
յիմոց կամ այլ ոք, զնոյենի և զՅուղայի նզովսն առցէ: Եւ ես
կուտած իմ հոգւոյս պաշար՝ զիմ այգին յայս զրատունս ետու:
Ես Սիրամարս զիմ այգին ետու: Եւ ես Սարգիս որդի Զխին զիմ
այգին ետու՝ ով հակառակի զվերոզրեալ նզովս առցէ:

(187) Մերձ սորա ի վերայ տրեելեան որմնաքարին:

*Կամաւն Աստուծոյ ես Վահրամ Կուլազեանց միարանեցայ
սուրբ Նշանիս և ետու զիմ գնուած այգին՝ որ ի Բերդիկ է, ի զր-
բատունս իմ հոգւոյս պաշար, Տէր Յովհաննէս և եղբարքն ետուն
մեզ պատարագ ի տանիս սուրբ Սարգսի. որ խափանէ նորա մեղացն
տէր է:

Մերձ սորա

*Յանուն Աստուծոյ մեր զիր է յանուն Հաղբատայ եղիսկոպո-
օիս և միարանացա, որ տուաք Առլասիին՝ որ եկն և միարանեցաւ
ըստ իւրում կարի ընծայ երեր. և մեր իւտարումն երկու ժամ
տուաք ի տանին սուրբ Սարգսի. որ խափանէ նորա մեղացն
տէր է:

Եռ զրան զրատանս է տապանաքար այսու արձտնազրութեամբ:

*Այս է տապան Ազիզ Մահմետոն, որ եղեւ պատճառ սուրբ
Եկեղեցւոյս վերստին նորոգման. ի թուին ՌՃՓԸ. (1669):

Ի վերայ զերեզմանաքարի Յարութիւն բժշկի:

*Մինչ օրհաս մահու առիս ժամանեաց

Բժիշկ բժշկեան, արդէն զիս կոչեաց.

Յորմէ յարութեան՝ յոյս մահկանացուաց

Սպասեմ ընդունել յետ աստի կենաց:

ՅՈՒԹԻԱՆ ԺԱ.

ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ,

Ի վեր քոն զհամայն շինուածո վանացո առանձնակի կոտո-
ցեալ է ի բարձրաւանդակ տեղւով յարեւելս կոյս մեծի տանարին
զեղեցկաշէն զանգակատունն, կոփածոյ քարամբը, ոքանչելի շի-
նուածովք՝ պատեալ խաչազարդ քանգակազործութեամբ: Եր-
կայնութիւն որոյ է տասն և վեց կանգուն, նոյնպէս և լայնու-
թիւնն իսկ բարձրութիւնն առանել է քան զբարձրութիւնո
համայն եկեղեցիաց և ես ոչ կարացի յափել: Նինուած սորա ի հի-

մանց անտի մինչև ցսոորոտս շքեղ կաթուղիկէին ճարտարաշէն կամարօք առանց սեանց ունի զհաստատութիւնն, Այս զանգակատունն ունի զլուսամուտս բազումս, և զեօթն գեղեցկադարդ խորանս, յորս գոն և սեպանք պատարագի:

Ի միջոյ տյսր զանգակատան յարեւելից կու սէ ի վերայ երկուց սոորին խորսնացն հրաշակերտեալ է գեղեցկաձեւ աստիճանօք քարեղէն սանդուիս, որով արձակ ելն էծս առնեն մինչև ցայն տեղի վերնածածկին, ուր կառուցեալ են ի յորս անկիւնս այսր զանգակատան ջորեքին խորսնըն յանուն յորից Աւետարանցաց: Աստի ի վեր քարձրացեալ է շինուածն ճարտարուեստ ցսոորոտս կաթուղիկէին գեղեցկադարմար կամարօք: Ուր կրկէն սսնդիսաւ ելանեն ի վեր. և ի քարձրութենէ անտի երե ի ընդարձակութիւն քոլոր վոյրաց և դաշտաց Հաղբատայ և շրջակայ գիւղօրէից նորա: Արտաքին երեւոյթ զանգակատանն շքեղ է քան զայլոցն, քանզի քարինք նորա են ըստ ամենայնի ուրբատաշք և յօղիւք ընդմիւեանս կապեալք, առ ի սմբապինդ ունելոյ զհաստատութիւն շինուածոյն: Ի ստորոտէ անտի որմունքն մինչև ցմիջին լուսամուտան զարդարեալ են գեղեցիկ քանդակործութեամբք, և ի չորից կու սէ յօրինեալ են խորշք շքեղաշէնք: և զարմանագործ արուեստիւք վորագրեալ են խաչք գեղեցկաքանդակիք: ոյք ի միջի իւրեանց սլարունակեն ի չորից կողմանց զմիջին լուսամուտան, և անտի ի վեր սլայծառ ացեալ քարձրանայ շինութիւն առաւել քան զառաւել շքեղ կերտուածովք: Ոյինչ պակաս է թէ շքեղութեամք, թէ գեղեցկութեամք և ճարտարութեամք քան զայլոցն կաթուղիկէ սորա, ընդ որովք կախեալ կան զանգակլքն, որք հրաւիրեն ի քարձրութենէ անտի ազգու իմն քաղցր ի լուր ձայնիւ զժողովուրդսն ի փառաբանութիւն Տեառն:

Այս գեղեցկաշէն զանգակատունն շինեալ է ի Տէր Համազառայ արքեպիսկոպոսէ վանացն Հաղբատայ ի դառն ժամանակս թաթարաց: որպէս և զրեալ կայ ի ճակատ զրան արձանին օրինակ զայս:

• Ի տէրութեան սուրբ ուխտիս Շահնշահի թուին Հայոց ՈՂԴ (1245) շինեցաւ գեղեցկադարդ տաճարս Աստուծոյ, զարթուցանող փառաբանցաց Տեառն եւթն խորսնաւ ի Տէր Համազառայ, որում ողորմիսցի Քրիստոս և տացէ ի լուսեղէն յարկաց իւրոց հոգւոյ նորա և Յովհաննիսի քուեր որդւոյ իւրոյ և այլ

աշխատողացն. զի բազում ջանիւ շինեաց զրա ի դռն ժամանակս թաթարաց . . . Զշինութենէ սորտ զրէ Կիրակոս Պատմագիր յետ պատմելոյ զթաղումն Յովհաննու Սարկաւազի, յարեւելից կուսէ եկեղեցւոյն զոր յետոյ քակեաց եպիսկոպոսն Համազասպ և շինեաց հրաշալի շինուած. ուր զանգական կախեցին յարմարեալ ի նմին և եկեղեցիս . . Վրէ այլուր նա ինքն Կիրակոս՝ Շինեաց (Համազասպ) եկեղեցի ի տեղին հրաշալի և զանգակակատուն . . . մեծ և սրանչելի » :

Առ զրան զանգակատանս են զերեզմանք ականաւոր վարդապետաց մերոց որք են :

Ի հիւսիսակողմն ի վերայ օրօրոցաձեւ տանլանսքարին զրի ետշոր տառիւք : Արձանս այս լսեմական է Սովիետոսի Սարկաւազի . . Կիրակոս դնէ զամ մահուան սորտ ի ՇՀԸ թուականին Հայոց (1109): Մերձ սորտ են նոյնանման երեք օրօրոցաձեւ զերեղմանք առանց արձանազրութեանց, յորոց մին է շիրիմ և դամբարան թորոս վարդապետի աշակերտի Մխիթարայ Գօշի, զոր յիշէ Կիրակոս յասելն իւր Կայ թաղեալ ի Հոյակաւոր վանքն Հաղբատ ի գլուխ վանացն ի զերեզմանս եպիսկոպոսաց և վարդապետաց . . (Կիր. Երես 127 Տ. Խոկ. Երեւ.) Թովմայ վարդապետ (Եպիսկոպոս) ի տաղաջափութեան իւրում ի սըրազան տեղիս Հայաստանի զրէ զմիւս վարդապետաց Հայոց :

• Անտի վութավ՝ մեծաւ դիմեալ

Ի սուրբ ու խոն՝ Հաղբատ Հասեալ.

Աւր են շիրիմքն՝ Հոյակեալ

Սրանչելի արանցըն լեալ :

Վարդապետաց անցեալ կանխաւ.

Ստեփաննոսի որ սպանաւ :

Սարկաւագայ՝ որ անդ եղաւ

Եւ Յովհաննէս անուանեցաւ :

Վարդան մելինիչն քաջարան

Ղուկաս քարոզն Տէրունեան

Ռուսինոսն անմարմնական

Ընդ նոսա եղեալ կոյ ի տապան :

Մերձ սորտ ի վերայ միոյ զետնահտասար տապանաքարին զրի . . Այս է Հանգիստ Պետրոս Հայրապետին. (Ժ. ԶԽ. (1491), Մերձ սորտ Կիրակոս Եպիսկոպոս տեղոյս. ՌՀԸ (1609), , Մերձ

սորա : Այս է հանգիստ կուսակլոն Դաւիթա քահանայի թիվին Ռ. (1551) :

Առաջի գրան զանգակատան ի հարաւակողմն է ապահնն Յուհաննէս վարդապետի Երզնկեցւոյ մականուամբ Պլուզ կոչեցելոյ, բայց քնաւին առանց արձանագրութեան, այլ տւանդութեամբ գտեալ են . որպէս և Դավարիկաթուղիկոսն յիշէ ի մէջ Դրտիտ ցանկալի գրքոջն, հասարակ վոքք քար է, յորոյ վերայ քանուակետ կայ փոքք գաւազան անձեւ՝ և խաչ ինչ շրջապատեալ՝ և ի վերայ գլխոյն փորուած իբր վեղարաձեւ : Հոգելոյն կաթուղիկոսն ամենայն Հայոց Տէր Եփրեմ վերահասու լեալ իրացս ի 1824 ամի կանգնեաց օրօրոցաձեւ սկիրճ արձան փորագրեալ ի վերայ զայս արձանագիր :

• Արձան մահու՝ Երզնկեցւոյ,
Յովհաննէսի՝ Ծործորեցւոյ,
Սա ժիր մշակ՝ Եկեղեցւոյ,
Սուրբ վարդապետ՝ Աղջին մերոյ,
Արդ մակ անուամբ՝ Պլուզ կոչի
Աստ ի Հայրատ՝ ի կենաց զրաւի,
Խոկ ի գալ աստ՝ Տետոն Եփրեմի
Հայոց մեծի՝ Հայրապետի,
Վասի հոգւոյն՝ յիշատակի
Կանգնէ զտապահու՝ յայսմ ամի
Թիւ մահուան 1326. թիւ նորոգման տառանաքա-
րին 1824 ն :

Ընդդէմ չհաւատողաց հրաշից գրեմ աստանօր զյայտնի հրա-
շագործութիւն երանելոյ հօրս մերոյ, զի ի յերաշտ ժամանակս
վասն անձրեւ տեղալոյ փորձիւ ջուր ածեն ի վերայ սոյն գերեզ-
մանի՝ զայ անձրեւ ի զովութիւն երկրին, խոկ յաւերօդ ժամա-
նակս ի հողոյ գերեզմանին տարեալ արկանեն ի բուրժառն որպէս
զխունկ, և լինի պարզութիւն օդոց : Որպէս ի ժամանակս Եփրեմ
կաթուղիկոսի (զրէ ծաղկաբար Յովհաննէս Եպիսկոպոս Մշեցի) նաեւ
յաւուրս մեր փորձիւք արարեալ են, որպէս յերաշտ ժա-
մանակս եկն անձրեւ, նմանապէս և յաւերօդս եղեւ պարզութիւն
օդոց սղօթիւք որբազան վարդապետին Յովհաննու Երզնկեցւոյ :
Զոյն հաւատացողս բանից իմոց՝ յորդորեմ գնալի Հայրատ, անձամբ
անձին առնուլ դփորձ ասացուածոյս և ապա ինձ նման հաւատալ

սքանչելեաց և հրաշից, որք լինին ի Տետոնէ յաշխարհի աստ միջնորդութեամբ որբոց:

Մերձ սորա տապան յորոյ վերայ կայ այս արձանագրութիւն առանց թուականի:

• Հաւրն մերոյ Դու թայ վարդապետի Պորտյրեցւոյ է տասւանս. յիշեա ի Տէր սուրբ:

Ի հարաւակողմն զանգակատանն են զերեզմանք երկուց վարդապետաց, որք անխոնիջ մշակութեամբ ի շինութիւն եւ ի սպածառութիւն վանացս վճարեցին զկեանս իւրեանց յաւուրս մեր:

• Արձանա այս Պետրոս վարդապետի

Սա յորջորջի Սարգսի որդի,

Գիւղեաւ ընիկ Շինողեցի

Ի բազում ամս ջանացի

Եւ զիմ տապանս այսր եղի,

Եւ որք զիպէք՝ տուք ողորմի: 1846 ամի:

Առընթեր սորա

• Արձան մահու կրօնաւորի

Առտուածատուր վարդապետի,

Տեղեաւ էր սա Շինողեցի.

Ի կէսօրեայ իւր հասակի

Յայսմ աշխարհէ առ Տէր փոխի: ի 1842 ամին:

Մերձ սորա ի հարաւակողմն է քերտ սքանչակ զերեզման, ունելով ի վերայ տապանաքարին զպաւելեր ննջեցելոյն հին հայկան կանացի զգեստիք: Գլուխն մինչեւ յծործութակուն վաթաթեալ է բոլորակածեւ աղնիւ շալիւք (ապարօշի) զաջ ձեռն եղեալ ի գոտիս իւր, իսկ զձախ ձեռն ուղղեալ ի վեր քաղէ որպէս կինն զպտուղ ի ծառոյն գիտութեան բարւոյ և չարի: Սարմին ննջեցելոյն իրրեւ ի կենդանի պատկերի նկարեալ տեսանի, շուրջ զորով սիւնազարդ կամորք ի վեր ելանեն մինչեւ զզլուխն. ուրանօր իրր ի քարտիզի մատնաչտի խոշոր տառիւք փորագրեալ է. • ԽՈՒՐԱ-ՎԻ . . . ՏԱՊԱՆ. • Այլ թէ ով է այս Խոսրովի . . . չէ յայտ տակաւին: Մի միտյն Յարութիւն արքեպիսկոպոսն շնօղեցի ի ժողով մատենին արձանագրութեանց ասէ զայսմ տապանէ:

• Սամքան Շուշանիկն է, քոյր Զարեհ իշխանին Հաղթատայ, թուն Բաղուց թագաւորի, կին Զալտլ իշխանին Խոչենայ:

Յարեւլս կոյս կանզնեաւ կտն երկու քարեայ իտաք. ի ուերայ

շիրմայ: Յառաջին խաչսքարին գլու: Թվ. Պ2'կ:

Սուրբ Նշան՝ Տէրունական

Դաւիթ Քահանայի՝ լե՛ր աւգնական:

Ի վերայ միւս խաչին, « Աստուած ողորմի Դաւիթ վարդապետին. ԶԾԱ (1502). Եւ ապա « ՆԽԶ թուականիս (997) ի հոյրութեան Սիմէւնի կանգնեցի զուրբ խաչս յաւդնականութիւն. : Ի հարաւակողմն փոքր ինչ հեռի ի զանգակատանէն ի վերայ հին խաչսքարին գրի այսպէս » ՆՀԲ. թուին (1023) « Ես Մակարս անարժան կանգնեցի խաչս յաւդնականութիւն հոգւոյ իմոյ:

Արձանագրութիւնք ի մէջ զանգակատան ի մէջ երկու զ դրանց:

« Երկու խորանս լուսոյ՝ յանուն սուրբ Աստուածածնին է :

« Յանուն Աստուածոյ ևս Գրիգոր՝ եղբայր Տեառն Համազատպայ միծ յուսով առաւինեցայ ի սուրբ Նշանս: Եւ ետու ի շինութիւն եկեղեցւոյս Ծ. (50.) դաշեկան եւ այլ արդիւնք. վարդապետքու և միարանքս սահմանեցին ի տաւնի սուրբ Գրիգորի Աղուհացիցն Ե. Ժամարար յիմ՝ անուն պատարագել, ով խափանէ իմ մեղացն տէր է, և կատարիցքն աւրհնին ի Քրիստոսէ :

Ի վերայ աշեակ խորանին:

« Ես Մէքան ամուսին Վաստակայ եառւ Լ. (30.) դաշեկան, և գոմէշնայ քսանն ի շինութիւն եկեղեցւոյս: Եւ մեք Տէր Համազատպ և միարանքս տուաք յԱստուածածնի տաւնին պատարագ յամենայն ամի անխտավան յանուն Մէքանայ մատուցանել ի խորանիս. ով խափանէ զատի յԱստուածոյ, և կատարիցքն աւրհնին յԱստուածոյ » :

Ի ներքնայարկա յետին գառջ յաջակովմն դրան:

« Ես Ներսէս (Եսայիա) քահանայ մեծ յուսով ապաւինեցայ ի սուրբ Նշանս, և ետու Լ. (30) դաշեկան ի շինութիւն եկեղեցւոյս. և Տէր Համազատպ և միարանքս ետուն Ա. պատարագ ի տաւնի Թէոդոս թագաւորին. ով խափանէ զատի յԱստուածոյ » :

Ի հիւսիսա - հարաւ. յանկունս զանգակատան արտաքուառ:

« Յանուն Ամենակալին Աստուածոյ՝ Ես մեղաւոր Ապարանիջաւարքուուաց հող ամենեցուն. ի դուռն սուրբ Նշանիս ինչ իմ - կարողութիւնն էր. ետու վանիցս շինութեան՝ վասն հոգւոյն փրկութեան էստատին և Զոլինին. թուին ՌՃԲ. (1655):

Մերձ ի դուռն զանգակատան է գիրեղման վերջին առաջնորդի

վանացա Զաքարիա արքեպիսկոպոսի Գուգառուեան ԲԵՀը հրուտեանց, ունելով ի վերայ սկզբ մարմարիոն տառանաքարին նկարեալ զթագ խաչ և գաւաղան արքեպիսկոպոսական իշխանութեան տրծանագրութեամբ հանդերձ:

Եին Անհոյին ժիր սլաշտօնակիր (Տ. 805) Ա. 172.

Տէր Զաքարիան բարուն անսլատիր

Հովիւ քաջակիրթ աշխոյժ և ընտիր

Արքեպիսկոպոս Էջմիածնի ձիր:

Քարոզ սուրբ տառից անիսնջ անձանձիր

Փառաց Արամեանց յար խուզախնդիր.

Զարմին Գուլասպեանց վեհ արձանագիր

Տոհմին ԲԵՀը հրուտեանց ոստ վայելցագիր:

Այլ ա՞չ, և աւաղ տունիդ բարեդիր

Զիա՞րդ գօսացար մորչ սուլարթակիր,

Խններեակ հնգիւք տիօք ծաղկածիր

Ելիր ի կենացս կեանս յանախտակիր:

Յեսնորդք յարգութեամբ ելցեն ի խնդիր

Աւա՞լ զի յարդեացս յանգէտս կացիր.

Ողբով անդադար հեծէ վշտակիր

(Մառայ քոյ Գրիգոր և եղբայր կրտսեր.

Այլ և աղէխարշ դառն արտասուալիր

Ընծայէ զրուազս և զեղերագիր:

Ի 1835 ամի Յունիսի 5. տւուրն:

Հանդէս թաղման սորտ կատարեցին երկոքին արքեպիսկոպոսունքն՝ Ստեփաննոս (երկայնարազուկ Արդութեանց առաջնորդն Վրաստանի), և Յարութիւն (Տէր Բարողեանց Շինօղեցի առաջնորդն Սանահնի): Եին բազմութիւնք քահանայից, իշխանաց և աշխարհականաց, որք ետուն զվերջին սպարտս յարգանաց վերջին տուաջնորդի վանացս: Զի զկնի մահուան սորտ առանձին վիճակն Հաղթատայ ի 1836 ամի բարձրագոյն հաստատեալ կարգադրութեամբ յաղագս կառավարութեան Հայոց եկեղեցւոյ միացաւ ընդմէմին սուրբ Էջմիածնի (Աւալունութեամբ):

Առաջնայի մասն մասն առաջնորդ առնենի տուն ու մասն առնենի տուն:

: (Ծ. 60.) ։ Յամ անուն անձնանուն և մասնանուն առնենի տուն ու մասն առնենի տուն:

Հայուն զառն մասն առնենի մասն առնենի տուն ու մասն առնենի տուն: